ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

կառավարման թափանցիկության և հաշվետվողականության վերաբերյալ

Վերջին ժամանակահատվածում օրենսդիր, գործադիր և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկության և հաշվետու կառավարման տեսանկյունից արձանագրվել է զգալի հետընթաց, որը լուրջ մարտահրավեր է Հայաստանի Հանրապետության ժողովրդավարության կայացման ճանապարհին:

1. Կառավարության իրավաստեղծ գործունեության թափանցիկության ապահովում

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքն ամրագրում է մշակվող օրենքների նախագծերի վերաբերյալ հանրային քննարկումներ անցկացնելու պարտադիր պահանջ, սակայն պրակտիկայում օրենքների նախագծերը պատշաճ կարգով հանրային քննարկումների չեն դրվում: Կարևորագույն օրենսդրական ակտեր, որոնք նախաձեռնվում են կառավարության կողմից, ոչ միայն պատշաճ հանրային քննարկումներ չեն անցնում, այլև չեն հրապարակվում ծանոթացման համար մինչև կառավարության հավանությանն արժանանալը: Այդպիսի օրինակներ են 2018թ. մարտի 23-ին ԱԺ կողմից ընդունված «Հանրային ծառայության մասին», «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը և մի շարք այլ օրենքներ, որոնք հանրությանը հասանելի են դարձել միայն ՀՀ կառավարության նիստի օրակարգ մտնելուց հետո՝ խախտելով օրենսդրության պահանջները: Հիշարժան է, որ նման ոչ թափանցիկ և ոչ մասնակցային եղանակով օրենքների նախագծերը կառավարություն հասցնելու և դրանց հավանություն տալու պրակտիկան կիրառվում է նաև արդյունավետ կառավարման և հակակոռուպցիոն քաղաքականությանը վերաբերող օրենքների նախագծերի դեպքում: Երբեմն, կարևոր օրենքների նախագծերի ընդունումը հանդիսանում է տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից բյուջետային աջակցության կամ այլ վարկեր տրամադրելու համար նախապայման, և քանի որ պրակտիկայում համապատասխան նախագծերը սկսում են մշակվել սահմանված վերջնաժամկետները լրանալուն մոտ, դրանք ընդունվում են օրենքով սահմանված ընթացակարգերի խախտմամբ և անհետաձգելի ռեժիմով: Նման մոտեցումները ցույց են տալիս ՀՀ կառավարության անլուրջ վերաբերմունքը կառավարման ժողովրդավարական սկզբունքների նկատմամբ:

Կառավարության գործունեության ոչ թափանցիկ մեխանիզմների ներդնումը վերահաստատվեց «Կառավարության կառուցվածի և գործունեության մասին» ՀՀ օրենքի սույն թվականի մարտի 23-ին ընդունմամբ: Այդ օրենքի համաձայն՝ այսուհետ կառավարության նիստերը անցկացվելու են դռնփակ, և կառավարության անդամները կամ աշխատակազմը առանց վարչապետի թույլտվության իրավունք չունեն հրապարակել որևէ տեղեկատվություն կառավարության նիստում քննարկված հարցերի վերաբերյալ, ինչի արդյունքում հանրությունը ստանալու է հատվածային և ոչ ամբողջական տեղեկատվություն կառավարության գործունեության և նիստում քննարկված հարցերի մասին: Այս փոփոխությունները որևէ կերպ դրական հետևանքներ չեն կարող ունենալ առանց այն էլ կառավարության գործունեության նկատմամբ վստահության բացակայության պարագայում:

Առաջարկություն

- «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում ամրագրել, որ ՀՀ կառավարության նիստի օրակարգում չեն կարող ներառվել հանրային քննարկումներ չանցած օրենքների նախագծերը:
- Վերացնել թե կառավարության գործունեության վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը սահմանափակող իրավական նորմերը:

2. Ազգային ժողովի կողմից օրենքների ընդունման պատշաճ գործընթացի ապահովում

Հապճեպ և ոչ մասնակցային եղանակով մշակված օրենքների նախագծերին հավանություն տալու պրակտիկան դրսևորվում է ոչ միայն կառավարության կողմից, այլ նույն կերպ ընթանում են նաև դրանց հետ կապված օրենսդրական գործընթացները ԱԺ-ում: Կառավարությունն օրենքների նախագծերը հավանության արժանացնելուն զուգահեռ դրանք ճանաչում է անհետաձգելի և հրատապ ուղարկում ԱԺ: ԱԺ-ում հերթական նիստերի օրակարգը սպառված լինելու դեպքում անգամ այդ օրինագծերի քննարկման համար կազմակերպվում են արտահերթ նիստեր, որտեղ դրանց առաջին և երկրորդ ընթերցումները անցկացվում են շատ կարճ ժամկետներում: Այս դեպքերում հանրային մասնակցությունն անհնար է, քանի որ խորհրդարանական լսումներ չեն կազմակերպվում, և ոչ էլ հնարավոր է մասնակցել ԱԺ ընթերցումներին նախորդող ԱԺ գլխադասային հանձնաժողովների նիստերին:

Առաջարկություն

- Օրենսդրությամբ հստակ սահմանել այն չափանիշները, որոնց առկայության դեպքում օրենքների նախագծերը կարող են համարվել անհետաձգելի:
- Օրենսդրությամբ սահմանել, որ անգամ կառավարության կողմից ընդունված չափանիշների հիման վրա անհետաձգելի ճանաչված և հրատապ ռեժիմով ընդունելու համար ԱԺ ներկայացված օրինագծերը ԱԺ-ում քննարկման որևէ փուլում պետք է ապահովեն հանրության մասնակցության հնարավորություն:

3. ՏԻՄ-երի իրավաստեղծ գործունեության թափանցիկության ապահովում

Երևանի քաղաքապետարանում Երևանի ավագանու նիստին հաջորդած աղմկահարույց դեպքերից հետո անմիջապես և անակնկալ կերպով ԱԺ կողմից սույն թվականի մարտի 23-ին ընդունվեց «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքը, որի համաձայն՝ լրագրողները այսուհետ չեն կարող ներկա գտնվել Երևանի քաղաքապետարանի նիստերին, այլ դրանց կարող են հետևել մամուլի համար քաղաքապետարանում առանձնացված հատուկ վայրից: Այս փոփոխությանը հաջորդեց քաղաքապետարանում լրագրողների հավատարմագրման նոր կարգի մշակումը, որով սահմանափակվում և խոչընդոտվում է քաղաքապետարանում և ավագանիում լրագրողների աշխատանքի կազմակերպումը: Մինչդեռ ժողովրդի կողմից ընտրվող Երևանի քաղաքապետի և ավագանու գործունեությունը պետք է հնարավորինս մոտ կանգնած լիներ ժողովրդին, որի համար հատկապես կարևոր է ՁԼՄ-ների կողմից առանց որևէ խոչընդոտի քաղաքապետի և ավագանու գործունեության լուսաբանումը և հանրությանը տեղեկատվության

փոխանցումը: Սա նաև կարող է լինել վտանգավոր նախադեպ առհասարակ ՏԻՄ-երի գործունեության տեսանկյունից:

Առաջարկություն

- Վերացնել «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները և ապահովել Երևանի քաղաքապետարանի գործունեության թափանցիկությունը:

4. Պետական գնումների թափանցիկության ապահովում

«Գնումների մասին» ՀՀ նոր օրենքը, որն ընդունվեց 2016թ. դեկտեմբերի 16-ին, ստեղծեց բոլոր նախադրյալները որոշ պաշտոնատար անձանց սպասարկման համար կատարվող պետական գնումների վերաբերյալ տեղեկատվությունը սահմանափակելու և այդ գործընթացների նկատմամբ հանրային վերահսկողությունը բացառելու համար: Մասնավորապես, ի տարբերություն նախկին՝ 2000թ. ընդունված, սակայն արդեն ուժը կորցրած ճանաչված «Գնումների մասին» ՀՀ օրենքի, որով գաղտնիք պարունակող գնումներ էին համարվում միայն ռազմական ոլորտի ձեռքբերումները, նոր օրենքով ամրագրվեց, որ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող ՀՀ Նախագահին, Ազգային ժողովի նախագահի, վարչապետի արարողակարգային ծախսերի, կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման և ապահովման համար կատարվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումները նույնպես համարվում են պետական գաղտնիք, հետևաբար դրանց հետ կապված գնումներն իրականացվում են փակ մրցույթով և դրա վերաբերյալ տեղեկատվությունը գաղտնի է: Այս նախաձեռնության համար որպես հիմնավորում ներկայացվում էր երկրի կարևորագույն պաշտոնյաների անվտանգության ապահովումը: Մինչդեռ նախկինում նման արգելքի բացակայության պայմաններում է, որ հնարավոր է եղել բացահայտել պետական բյուջեի միջոցների հաշվին կատարած մի շարք կասկածելի ծախսեր, որը, թերևս, իշխանությունների համար միակ պատճառն է նման բացահայտումներ անելու և դրանք հրապարակելու բոլոր ուղիները փակելու համար: Սա լուրջ հետընթաց քայլ է, որը որևէ դրական արդյունք չի կարող տալ վերոհիշյալ պաշտոնատար անձանց համար կատարվող ծախսերի թափանցիկության նկատմամբ վերահսկողություն ապահովելու (բացառելով որևէ շահով պայմանավորված ոչ ողջամիտ գներով կամ պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձանցից պետական գնումների իրականացումը և այլն) և պետական միջոցների ծախսման արդյունավետությունը բարձրացնելու առումով:

Առաջարկություն

- Վերանայել «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված ՀՀ Նախագահին, Ազգային ժողովի նախագահի, վարչապետի գործունեության հետ կապված գնումների փակ մրցույթի ընթացակարգը և վերացնել այս ոլորտում կատարվող գնումների գաղտնիությունը: